ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ե՞րբ են Հայաստանի տարածքում առաջին անգամ հիշատակվում Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես առանձին վարչական միավորներ.

1) Ք. ա. III դարում
2) Ք. ա. IV դարում
3) Ք. ա. V դարում
4) Ք. ա. VI դարում

2 Ե՞րբ են տեղի ունեցել Աշոտ III–ին թագադրելու հանդիսությունները.

1) 961 թ.
2) 959 թ.
3) 963 թ.
4) 964 թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը.

1) 1808 թ. հունիսին
2) 1807 թ. հուլիսին
3) 1808 թ. մայիսին
4) 1807 թ. հունիսին

4 ՀՀ զինանշանի մասին օրենքը հաստատվել է՝

1) 1919 թ. մայիսի 28–ին
2) 1919 թ. հուլիսի 23–ին
3) 1920 թ. մայիսի 28–ին
4) 1920 թ. հուլիսի 23–ին

5 Ե՞րբ է խեթական թագավորի և Հայասայի Խուկանա արքայի միջև կնքվել բարեկամության և փոխօգնության պայմանագիր.

1) Ք. ա. XII դարում
2) Ք. ա. XIII դարում
3) Ք. ա. XIV դարում
4) Ք. ա. XV դարում

6 Ե՞րբ է գահակալել Օշին թագավորը.

1) 1308–1322 թթ.
2) 1307–1321 թթ.
3) 1308–1320 թթ.
4) 1320–1342 թթ.

7 **Ե՞րբ են Զեյթունի ինքնապաշտպանության ղեկավարները խորհրդակցություն հրավիրել Ս. Աստվածածնի վանքում.**

1) 1862 թ. օգոստոսի 29–ին
2) 1862 թ. հուլիսի 2–ին
3) 1862 թ. օգոստոսի 2–ին
4) 1862 թ. հուլիսի 29–ին

8 **Ե՞րբ է ՀՀ Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել անկախ պետություն.**

1) 1991 թ. սեպտեմբերի 23–ին
2) 1991 թ. սեպտեմբերի 2–ին
3) 1991 թ. սեպտեմբերի 21–ին
4) 1990 թ. օգոստոսի 23–ին

9 **Հայոց ո՞ր կաթողիկոսի ձեռնադրմամբ է հաստատվել Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնուրույնությունը.**

1) Հուսիկ Ա
2) Հուսիկ–Շահակ
3) Սահակ Ա
4) Ներսես Ա

10 **Որտե՞ղ է Իսրայել Օրին մտել զինվորական ծառայության և ստացել սպայի աստիճան.**

1) Ֆրանսիայում
2) Գերմանիայում
3) Իտալիայում
4) Անգլիայում

11 **Կիլիկիայի հայկական ինքնավարության կառավարությունը գլխավորում էր՝**

1) Պետրոս Սարաճյանը
2) Պողոս Նուբարը
3) Միհրան Տամատյանը
4) Սարգիս Ճեպեճյանը

12 **Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի՝ այսօր հայտնի հնագույն պետությունը.**

1) Միտաննի
2) Արատտա
3) Ուրարտու
4) Էթիունի

13 Հայոց արևելից կողմերում վերականգնված թագավորությունում ո՞ր տոհմից սերող ներկայացուցիչն էր իշխում.

1) Հայկազուն–Երվանդական
2) Հասան–Ջալալյան
3) Մամիկոնյան
4) Հայկազուն–Սիսակյան

14 Որտե՞ղ է հրատարակվել «Հնչակ» թերթը.

1) Փարիզում
2) Մարսելում
3) Ժնևում
4) Թիֆլիսում

15 Խորհրդային Հայաստանում 1930–ական թթ. որքա՞ն մարդ է բռնաճնշումների ենթարկվել.

1) 25 000
2) 15 000
3) 23 000
4) 9 000

16 Սարդուրի II–ի տերությունը հյուսիսից հարավ ձգվում էր՝

1) Սև ծովից մինչև Պարսից ծոց
2) Կասպից ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան
3) Սև ծովից մինչև Փոքր Ասիայի կենտրոնական շրջան
4) Կասպից ծովից մինչև Պարսից ծոց

17 Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.

«Քեզ պսակում եմ, Մերուժա՛ն, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:

1) Աշոտ Բագրատունին
2) Բագարատ Բագրատունին
3) Սահակ Բագրատունին
4) Սմբատ Բագրատունին

18 **Ո՞ր փաստաթղթից են ստորև բերված տողերը.**

Ով «որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

1) Զեքի փաշայի հրամանից
2) Թալեաթի, Էնվերի և Նազըմի հրամանից
3) Աբդուլ–Համիդ II–ի հրամանից
4) Թալեաթի, Ջեմալի և Բ. Շաքիրի հրամանից

19 **Գտնել սխալ պատասխանը.**

Ի՞նչ էր Ստալինի անձի պաշտամունքը:

1) խորհրդային հասարակության մեջ տեղ գտած խիստ բացասական երևույթ, որը հանգեցրեց հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի խեղման
2) Ստալինի տեղի և դերի օբյեկտիվ արժևորումը
3) Ստալինի դերի խիստ գերագնահատումը, երբ նրան էին վերագրվում ողջ ժողովրդի ջանքերով նվաճված հաջողությունները, ԽՍՀՄ առաջընթացը և հաղթանակները
4) խորհրդային հասարակության մեջ տեղ գտած խիստ բացասական երևույթ, որը հանգեցրեց անօրինականությունների, անմեղ մարդկանց հալածանքների ու ոչնչացման

20 **Խալդյան դարպասը հետագայում ի՞նչ է կոչել ժողովուրդը.**

1) Խալդիի դուռ
2) Մենուայի մուտք
3) Միհերի դուռ
4) Սրբազան մուտք

21 **Թվարկվածներից որո՞նք են 1259 թ. հայ–վրացական հակամոնղոլական ապստամբության պատճառ.**

ա. հարկերի բարձրացումը
բ. ամրիսպասալար Զաքարեի թոռան՝ Զաքարե Զաքարյանին մահապատժի ենթարկելը
գ. հայ–վրացական ջոկատները Բյուզանդիա՝ խաչակիրների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշումը
դ. հայ–վրացական ջոկատները Եգիպտոս՝ մամլուքների դեմ պատերազմի ուղարկելու մոնղոլների որոշումը
ե. Հուլավու խանի կողմից Խաչենի տիրակալ Հասան–Ջալալի սպանությունը

1) ա, դ
2) բ, գ
3) ա, բ
4) գ, ե

22 **Ի՞նչն է հանդիսացել XIX դարի կեսերին Օսմանյան կայսրությունում մեծ տերությունների ազդեցության տարածման համար պայքարի սրվելու պատճառ.**

1) Կրետե կղզուն տիրելու համար տարբեր երկրների միջև հակամարտությունը
2) Օսմանյան պետությանը պատկանող Կիպրոս կղզուն տիրելու համար ծավալված վեճը
3) Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար քրիստոնեական տարբեր եկեղեցիների միջև ընթացող վեճը
4) բարեփոխումների պահանջով հայ հասարակական–քաղաքական շրջանակների դիմումը

23 **Արցախյան ազատագրական պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը ԼՂ–ում՝ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ
բ. Շուշիի ազատագրումը
գ. Մարտակերտի ազատագրումը
դ. Լաչինի հաղթական գործողությունները
ե. Քելբաջարի հյուսիսային մասի և Օմարի լեռնանցքի ազատագրումը

1) բ, դ, ա, գ, ե
2) գ, բ, դ, ա, ե
3) բ, ա, գ, ե, դ
4) գ, դ, բ, ա, ե

24 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. հռոմեա–պարթևական տասնամյա պատերազմի սկիզբը
բ. Վաղարշ I Արշակունու՝ Պարթևստանում գահ բարձրանալը
գ. Արտաշատ քաղաքի ավերումը Կորբուլոնի կողմից
դ. Ներոն կայսեր գահ բարձրանալը
ե. Վաղարշի և Տրդատի գլխավորած պարթևական զորքի մուտքը Հայաստան և Հռադամիզդի վտարումը
զ. Տրդատի հեռանալը Հայաստանից Ատրպատական՝ իր եղբոր՝ Բակուրի մոտ

1) դ
2) գ
3) ա
4) զ

25 **Նստավայրերի անունները համապատասխանեցնել հայ թագավորների կամ իշխանների անուններին.**

ա. Գող Վասիլ
բ. Գագիկ II
գ. Փիլարտոս
դ. Օշին
ե. Կոստանդին I

1. Վահկա
2. Մարաշ
3. Պիզու
4. Քեսուն
5. Լամբրոն
6. Անավարզա

1) ա–3, բ–4, գ–1, դ–5, ե–6
2) ա–3, բ–4, գ–2, դ–5, ե–6
3) ա–4, բ–3, գ–5, դ–6, ե–1
4) ա–4, բ–3, գ–2, դ–5, ե–1

26 **Կատարել համապատասխանեցում.**

Հիմնադրման վայր	*Կրթական հաստատություն*
1. Վենետիկ	ա. Ռափայելյան դպրոց
2. Զմյուռնիա	բ. Մեսրոպյան դպրոց
3. Կ. Պոլիս	գ. Մարդասիրաց ճեմարան
4. Կալկաթա	դ. Կարապետյան դպրոց
	ե. Սկյուտարի դպրոց

1) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
2) 1–ա, 2–դ, 3–ե, 4–գ
3) 1–ա, 2–բ, 3–ե, 4–գ
4) 1–ա, 2–ե, 3–գ, 4–դ

27 **Ընտրել այն շարքը, որը կազմված է միայն ճարտարապետներից.**

1) Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար, Միքայել Մազմանյան, Հովհաննես Զարդարյան, Ալեքսանդր Թամանյան
2) Հարություն Կալենց, Ալեքսանդր Թամանյան, Մարկ Գրիգորյան, Հակոբ Հակոբյան, Նիկողայոս Բունիաթյան
3) Կարո Հալաբյան, Ալեքսանդր Թամանյան, Գևորգ Քոչար, Արմենակ Մնջոյան, Հակոբ Հակոբյան
4) Մարկ Գրիգորյան, Կարո Հալաբյան, Գևորգ Քոչար, Նիկողայոս Բունիաթյան, Միքայել Մազմանյան

28 Ե՞րբ են մամլուքները վերջնականապես գրավել Ադանա և Տարսոն քաղաքները.

1) 1360 թ.
2) 1335 թ.
3) 1369 թ.
4) 1373 թ.

29 Ե՞րբ է Ռուսաստանի կայսրը չեղյալ հայտարարել իր իսկ հաստատած հակահայ օրենքը.

1) 1905 թ. փետրվարի 6–ին
2) 1905 թ. օգոստոսի 1–ին
3) 1905 թ. հունվարի 9–ին
4) 1904 թ. հուլիսի 29–ին

30 Ո՞ւմ ղեկավարությամբ է Լենինականում (Գյումրի) հիմնվել պետական թատրոնը.

1) Հրաչյա Ղափլանյանի
2) Արմեն Գուլակյանի
3) Վարդան Աճեմյանի
4) Լևոն Քալանթարյանի

31 Ո՞ր գավառներն էր Վասպուրականից անջատել և իր թագավորությանը միացրել Գագիկ I–ը.

1) Բագրևանդ և Կոգովիտ
2) Ծաղկոտն և Արտազ
3) Արտազ և Բագրևանդ
4) Կոգովիտ և Ծաղկոտն

32 Ո՞ր մարմինն է ընդունել ստորև տրված որոշումը.

«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

1) Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը
2) Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեն
3) ԼՂԻՄ մարզային խորհուրդը
4) Հայաստանի Գերագույն խորհուրդը

33 **Հայոց ո՞ր արքայի մահվանից հետո է Հայաստանում տիրող իրավիճակն այսպես պատկերավոր բնորոշել հռոմեացի պատմիչը.**

«Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»:

1) Տիգրան III-ի
2) Տիգրան IV–ի
3) Արտաշես II–ի
4) Արտավազդ II–ի

34 **Ըստ պատմիչի՝ ո՞ր ճակատամարտի մասնակիցներն են միմյանց քաջալերել հետևյալ խոսքերով.**

«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:

1) Արճեշի
2) Արյան լճի
3) Ներսեհապատի
4) Արձնիի

35 **Ընտրել այն մարմինները, որ նախատեսվում էր ստեղծել արևմտահայերի «Ազգային սահմանադրությամբ».**

1) Կենտրոնական կոմիտե
2) Երեսփոխանական ժողով
3) Ազգային բյուրո
4) Հատուկ կոմիտե
5) Ազգային կենտրոնական վարչություն

36 **Ի՞նչ գործառույթներ էին վերապահված ասպետություն գործակալության ղեկավարին.**

1) պալատական արարողությունների կազմակերպումը
2) թագավորական գանձարանի հսկողությունը
3) օտար երկրների դեսպանների ընդունելության կազմակերպումը
4) թագավորական պահակազորի հրամանատարությունը
5) թագավորական կալվածքների հսկողությունը

37 **Գտնել ճիշտ պատասխանները.**
Վաղարշ II–ի և Մեպտիմիոս Սներոսի միջև կնքված պայմանագրի արդյունքում՝

1) կայսրը ճանաչեց Վաղարշի իրավունքները Հյուսիսային Միջագետքի վրա
2) հռոմեական կայսրը պարտավորվեց զումար վճարել հայոց այրուձիին, որը հյուսիսում իրականացնում էր Կովկասյան լեռնանցքների և մերձակա տարածքների պաշտպանությունը լեռնային ցեղերի հարձակումներից
3) Հայաստանը դարձավ «Հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ»
4) հռոմեական լեգեոնները դուրս բերվեցին Հայաստանից
5) Հռոմը օժանդակեց Հայաստանին հոների դեմ պայքարում

38 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը.**

1) «Արևելյան լեգեոնի» ստեղծման նպատակը ռուսական զորքերի կազմում թուրքերի դեմ պատերազմում հայ կամավորների մասնակցության ապահովումն էր:
2) Ռազմական կոմունիզմի շնորհիվ բարելավվեց Խորհրդային Հայաստանի սոցիալ–քաղաքական վիճակը:
3) 1918 թ. Կ. Պոլսում կոնֆերանս հրավիրելու համար Գերմանիայի շահագրգիռ լինելու իրական պատճառը Բաթումի պայմանագիրը վերանայելու ձգտումն էր:
4) Մայիսյան ապստամբության հետևանքը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումն էր:
5) Փետրվարյան ապստամբության հետևանքը հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և հանրապետություն վերադարձնելու գործընթացի ծավալումն էր:

39 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Զրադաշտականությունը դուալիստական կրոն էր, այսինքն՝ դրա հետևորդները հավատում էին, որ կան երկու գերագույն աստվածներ՝ չար և բարի:
2) Արևի պաշտամունքի գլխավոր կենտրոնը եղել է Բարձր Հայք նահանգի Դերջան գավառի Բագառիճ ավանում:
3) Արամեական այբուբենը կազմված էր 22 տառից, գրվել է աջից ձախ:
4) Հայոց դիցարանը, ի տարբերություն հունական դիցարանի, բաղկացած չէր ազգակից աստվածներից:
5) Հելլենիստական մշակույթը և հունարենը Հայաստանում տարածում գտան գերազանցապես արքունիքում և ավագանու շրջանում:
6) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ ուրարտական երևույթ է:

40 **Ո՞ր պնդումներն են արտացոլում «Նոր տետրակ»–ի բովանդակությունը.**

1) Կոչ էր արվում հայ երիտասարդներին դուրս գալու օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնելու ազատության:
2) Առաջարկվում էր վերականգնել հայոց թագավորությունը և երկիրը կառավարել բացարձակ միապետի միջոցով:
3) Զգուշացնում էր հայ երիտասարդներին հեռու մնալ ապստամբելու գաղափարից:
4) Առաջարկվում էր ստեղծել սահմանադրություն և երկիրը կառավարել ժողովրդի ընտրովի ներկայացուցիչների միջոցով:
5) Առաջարկվում էր Արցախի մելիքներից մեկին դարձնել Հայաստանի թագավոր:

41 **Իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Պերոզի գահակալության սկիզբը
2) Գյուտ կաթողիկոսի գահակալության սկիզբը
3) Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի նահատակվելը
4) Վախթանգ Գորգասալի գահակալության սկիզբը
5) պարսից դրածո Վազգեն բդեշխի սպանությունը
6) մարզպան Ատրվշնասպի սպանվելը

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Դժոխք Հրայրի զոհվելը
2) հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների սկիզբը
3) Գելիեգուզան գյուղում ինքնապաշտպանության ղեկավար մարմնի ստեղծումը
4) Մկրտիչ Խրիմյանի նախաձեռնությամբ Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի հրավիրումը
5) Թորգոմի «Մրրիկ» խմբի հասնելը Սասուն

43 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. «Տրանսիլվանիա» շոգենավով հայ առաջին հայրենադարձների խմբի ժամանումը Բաթում
Բ. ՄԱԿ–ի ամբիոնից Կիպրոսի արտաքին գործերի նախարարի՝ Հայկական հարցը քննարկելու մասին արված կոչը
Գ. ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեի գործունեության դադարեցումը
Դ. Հայկական համաշխարհային կոնգրեսի բացումը Նյու Յորքում
Ե. սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը

1) 1970 թ. հոկտեմբեր
2) 1947 թ. ապրիլ
3) 1948 թ. սեպտեմբեր
4) 1965 թ. հոկտեմբեր
5) 1946 թ. հունիս
6) 1949 թ. օգոստոս

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Հեղինակի անունը համապատասխանեցնել իր աշխատությանը.**

Ա. «Բաքոսուհիներ»
Բ. «Անաբասիս»
Գ. «Պատմություն»
Դ. «Ժամանակագրություն»
Ե. «Մեծ մարդկանց մասին»

1) Մեթրոդորոս Սկեփսացի
2) Սեբեոս
3) Ամֆիկրատես Աթենացի
4) Էվրիպիդես
5) Հիպպոլիտիս
6) Քսենոփոն

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը 1992 թ. հունվարի 8–ին Գերագույն խորհրդի նախագահ է ընտրել Արթուր Մկրտչյանին:
2) ՀՀ սահմանադրական առաջին փոփոխություններով վերանայվել է ՀՀ Ազգային ժողովի գերիշխող դիրքը իշխանության ճյուղերի համակարգում:
3) Հայաստանի առաջին բազմակուսակցական Գերագույն խորհրդում ամենամեծ խմբակցությունն ուներ Հայոց համազգային շարժումը:
4) ՀՀ վարչատարածքային փոփոխություններով նախկին շրջանների միավորման միջոցով ստեղծվել են 9 մարզեր:
5) Հայաստանի երրորդ հանրապետությունում բազմակուսակցական համակարգը ներդրվել է անկախության հանրաքվեից հետո:
6) Կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու ամբաստանությամբ 1995 թ. դեկտեմբերի վերջին կասեցվել է դաշնակցության գործունեությունը:

46 **Հասկացությունները համապատասխանեցնել բացատրություններին.**

1. ջիհադ
2. գյավուր
3. հայդուկ
4. ֆիդայի

ա. սրբազան պատերազմ
բ. զոհ
գ. չելլո
դ. անհավատ
ե. հետևակ

1) 1–դ, 2–ա, 3–ե, 4–բ
2) 1–ա, 2–բ, 3–գ, 4–ե
3) 1–ե, 2–ա, 3–գ, 4–բ
4) 1–ա, 2–դ, 3–ե, 4–բ

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ զբաղեցնող հոգևոր–ասպետական կազմակերպություններից մեկը հայտնի էր «Հիվանդախնամների միաբանություն» անունով:
բ. Հայաստանի հարավում՝ Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ–Արմենների աթաբեկություն:
գ. Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զինուժը կոչվում էր աշխարհազոր:
դ. Քաղաքներում հարկահանությանը, առևտրին ու արհեստներին, շուկաներին հետևող պաշտոնյան կոչվում էր սպասալար:
ե. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյային կոչում էին կանցլեր:
զ. Սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատերերին անվանել են պարոնտեր:
է. Արևմտյան Հայաստանում ստեղծված կիսանկախ իշխանությունները կոչվում էին մելիքություններ:
ը. Միջնադարում քաղաքի կառավարիչը կոչվում էր շահապ:

1) ա, դ, ե
2) բ, դ, է
3) ա, գ, ը
4) բ, զ, ե

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Սարդուրի II–ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:

բ. Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվեց մեկ պետության մեջ:

գ. Մենուայի հաղթարշավների հետևանքով Ասորեստանը թուլացավ և, չկարողանալով այլևս վերականգնել իր դիրքերն Առաջավոր Ասիայում, շուտով նվաճվեց Բաբելոնի կողմից:

դ. Սարդուրի II–ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու հետևանքով Վանի թագավորությունը սկսեց անցում կատարել համադաշնային կառավարման համակարգից կենտրոնացված պետության:

ե. Ռուսա II–ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանները կրկին հասան Միջերկրական ծովի արևելյան ավազանին:

զ. Մենուայի հաղթարշավների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները թեև մտան Վանի տերության կազմը, սակայն հարկատու չդարձան:

է. Սարդուրի II–ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց դաշնային կառավարման:

1) ա, դ, է
2) բ, գ, է
3) ա, բ, դ
4) գ, ե, զ

49 **Տրվածներից որո՞նք Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման հետևանքներ չեն.**

ա. Հայաստանն աստիճանաբար ագրարային երկրից վերածվեց արդյունաբերական հանրապետության:
բ. Կրճատվեց խորհրդահայ մտավորականության և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակը:
գ. Բանվոր դասակարգի քանակը մի քանի անգամ աճեց:
դ. Այն առաջացրեց բնապահպանական խնդիրներ:
ե. Հրազդան գետի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցումը հանգեցրեց Սևանա լճի մակարդակի իջեցմանը:
զ. Ստեղծվեցին մի շարք կոմունաներ, արտելներ, սովխոզներ:
է. Հայաստանի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30 %–ով:

1) ա, դ, ե
2) բ, գ, է
3) դ, ե, զ
4) բ, զ, է

50 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Արեգ–Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
բ. Երվանդաշատ մայրաքաղաքի հիմնադրումը
գ. Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ պահլավերենի գործածության սկիզբը
դ. Անտիոքոս I–ի թագադրումը «Տիգրանյան» կամ «Հայկական» թագով
ե. Արշակ I–ի գահակալության սկիզբը
զ. Բագարանի դառնալը Հայոց թագավորության հոգևոր կենտրոն
է. «Բաքոսուհիներ» ողբերգության բեմադրությունը Արտաշատում պարթև արքա Օրոդես II–ի ներկայությամբ
ը. Տիգրան Մեծի թագադրությունը

1) է
2) ա
3) դ
4) ե

51 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Արծն քաղաքի ավերումը թյուրք-սելջուկների կողմից
բ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումը
գ. Ռուբեն I–ի կառավարման սկիզբը
դ. Տաշիր–Զորագետի թագավորության անկումը
ե. Տուղրիլի զորքերի արշավանքը Հայաստան
զ. Հովհաննես–Սմբատի մահը
է. Ալփ Արսլանի զորքերի ներխուժումը Հայաստան
ը. Տայքի միացումը Բյուզանդիային
թ. սելջուկյան պետության իշխանության հաստատումը Փոքր Ասիայում
ժ. Բասենի ճակատամարտը թյուրք–սելջուկների դեմ և բյուզանդական ու հայ-վրացական զորքի պարտությունը

1) է
2) ե
3) ա
4) ժ

52 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.**

ա. Համիդիե հեծելազնդերի ստեղծումը
բ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի հանձնումը սուլթանին
գ. Խանասորի արշավանքը
դ. Գում Գափուի խաղաղ ցույցը
ե. Շենիկի գյուղապետ Գրգոյի (Գրիգոր Մոսեյան) տանը ինքնապաշտպանական ժողովի հրավիրումը
զ. Աղասու նախագահությամբ Զեյթունի ժամանակավոր կառավարության կազմվելը
է. Սարգիս Կուկունյանի արշավանքը
ը. Գևորգ Չավուշի ու Անդրանիկի վրեժխնդիր լինելը Բշարե Խալիլից
թ. Մարաշի փաշայի կողմից Պապիկ Նորաշխարհյան իշխանին Զեյթունի քաղաքագլուխ ճանաչելը
ժ. Բաբը Ալիի ցույցը

1) բ
2) ժ
3) ե
4) զ

53 **Կատարել համապատասխանեցում.**

Ո՞ր վայրերից են սկզբնավորվում Հայկական լեռնաշխարհի նշանավոր գետերը.

1. Ճորոխ	ա. Սրմանց լեռներից
2. Արևելյան Եփրատ	բ. Ծովք լճից
3. Արևելյան Տիգրիս	գ. Ծաղկավետ լեռներից
4. Արևմտյան Եփրատ	դ. Հայկական Տավրոսից
5. Արևմտյան Տիգրիս	ե. Խաչափայտի լեռներից
6. Արաքս	զ. Ծաղկանց լեռներից
	է. Բյուրականի լեռներից

1) 1–է, 2–գ, 3–բ, 4–զ, 5–դ, 6–ե
2) 1–ե, 2–զ, 3–բ, 4–գ, 5–դ, 6–ա
3) 1–ե, 2–զ, 3–դ, 4–գ, 5–բ, 6–ա
4) 1–ե, 2–գ, 3–դ, 4–զ, 5–բ, 6–է

54 **Առանձնացնել այն երեք պայմանները, որոնք տեղ են գտել Տիգրան Մեծի և Գոդերձ II–ի միջև կնքված հայ–պարթևական հաշտության պայմանագրում.**

ա. Օսրոյենեն, Ադիաբենեն և Միգդոնիան հետ ստանալու դիմաց Պարթևստանը ճանաչում էր Տիգրան Մեծի գերիշխանությունը:
բ. Հօգուտ Հռոմի՝ Հայաստանը հրաժարվում էր Մարաստանից և Ատրպատականից:
գ. Պարթևստանը վերադարձնում էր Հայաստանից խլած Յոթանասուն հովիտները:
դ. Պարթևների արքան կորցնում էր «արքայից արքա» տիտղոսը, որն այնուհետև կրելու էին Տիգրանն ու իր հաջորդները:
ե. Հռոմի դեմ Պարթևստանի պատերազմելու դեպքում Տիգրան Մեծը խոստանում էր օգնական ուժեր տրամադրել Գոդերձ II–ին:
զ. Հօգուտ Հայաստանի՝ պարթևները հրաժարվում էին Հյուսիսային Միջագետքից և Մարաստանից:
է. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Ատրպատականի վրա, որի տարածքը ստանալու էր Հայաստանը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Պարթևստանը:

1) գ, դ, ե
2) ա, ե, զ
3) գ, դ, զ
4) բ, ե, է

55 **Թվարկված եկեղեցիներից որո՞նք են կառուցվել VII դարում.**

ա. Մրենի

բ. Գայանե

գ. Զվարթնոց

դ. Ս. Էջմիածին

ե. Ավանի

զ. Ծիծեռնավանքի

է. Արուճի Ս. Գրիգոր

1) բ, դ, ե, զ
2) ա, գ, ե
3) գ, դ, է
4) ա, բ, գ, է

56 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել Մովսես Սարաֆյանի կողմից ներկայացված Հայաստանի ազատագրության ծրագրում.**

ա. Հերակլ II–ը պետք է օժանդակեր ռուսական զորքին՝ գրավելու Երևանի խանությունը՝ զինվորներ ուղարկելով և գահընկեց անելով իրենից կախման մեջ գտնվող Երևանի խանին:
բ. Հերակլ II–ը պետք է Վրաստանում կատարեր երկիրը հզորացնող բարեփոխումներ, որպեսզի օգնություն ցուցաբերեր հայ ժողովրդի ազատագրական պայքարին:
գ. Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմված կամավորական ջոկատները, որոնց հրամանատարը պետք է լիներ հայազգի և ենթարկվեր ռուսական բանակի հրամանատարությանը, ռուսական զորքերի հետ ուղարկվելու էին Վրաստան:
դ. Հակաթուրքական պայքարի մեջ պետք է ընդգրկվեին Արցախի մելիքները՝ նրանց տրամադրելով զենք և ռազմական հանդերձանք:
ե. Ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ պառլամենտական կառուցվածքով:
զ. Թուրքիայի դեմ արշավանքը պետք է կատարվեր երկու ուղղություններով:
է. Հայաստանի թագավոր պետք է հռչակվեր Ղարադաղի մելիքներից մեկը:

1) ա, գ, դ
2) բ, զ, է
3) ա, գ, է
4) բ, դ, ե

57 **Կատարել համապատասխանեցում.**

Հեղինակ

1. Արամ Խաչատրյան
2. Սարգիս Մուրադյան
3. Համո Բեկնազարյան
4. Արտաշես Հովսեփյան
5. Նաիրի Զարյան
6. Մինաս Ավետիսյան

Ստեղծագործություն

ա. «Անլռելի զանգակատուն» պոեմի պատկերազարդում
բ. «Ալեքսանդր Թամանյան» արձան
գ. «Սպարտակ» բալետ
դ. «Ծնողներս» կտավ
ե. «Պեպո» կինոնկար
զ. «Կոմիտասի վերջին գիշերը» նկարաշար
է. «Արա Գեղեցիկ» ողբերգություն

1) 1–գ, 2–է, 3–դ, 4–ե, 5–զ, 6–ա
2) 1–գ, 2–զ, 3–ե, 4–բ, 5–է, 6–դ
3) 1–է, 2–զ, 3–բ, 4–ե, 5–ա, 6–դ
4) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ, 5–զ, 6–ա

58 **Գտնել սխալ պատասխանները:**
Օտարների կողմից Հայաստանն անվանվել է՝

1) Հարմինույա
2) Արմինա
3) Հայք
4) Ուրարտու
5) Բիայնիլի
6) Սոմխեթի
7) Հայաստան

59 **Ընտրել ԽՍՀՄ-ում 1930-ական թթ. կեսերին հաստատված ամբողջատիրական համակարգի բնորոշ գծերը.**

1) երկկուսակցական համակարգի հաստատումը
2) իշխանության երեք ճյուղերի իրական տարանջատումը
3) միակուսակցական համակարգի հաստատումը
4) ընդդիմության առկայությունը խորհրդարանում
5) իշխանության բռնազավթումը ՀամԿ(բ)Կ կողմից
6) իշխող կուսակցության ներսում ընդդիմության վերացումը
7) գաղափարախոսական բազմակարծության թույլատրումը
8) եկեղեցու նկատմամբ անհանդուրժողական քաղաքականությունը

60 **Ընտրել սխալ պատասխանները.**
Արևմտահայերի առաջին համագումարի գործունեության արդյունքում՝

1) Ընդունվեց որոշում հայկական մարզերի տնտեսության վերականգնման վերաբերյալ:
2) Ընդունվեց որոշում օրենսդիր մարմին՝ Ազգային ժողով ստեղծելու մասին:
3) Ընդունվեց որոշում հայրենիքում արևմտահայերի վերաբնակեցման վերաբերյալ:
4) Ընդունվեց որոշում Հայաստանում ազգային վարչություն կազմակերպելու մասին:
5) Ընդունվեց որոշում Այսրկովկասում ինքնակառավարման մարմինների հաստատման մասին:
6) Ընդունվեց որոշում Ռուսաստանում եղած արևմտահայ ռազմագերիներին ազատ արձակելու մասին:
7) Ընդունվեց որոշում արևմտահայ զորաբաժին ստեղծելու մասին:
8) Ընդունվեց որոշում փախստականներին օգնելու մասին:

61 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում Պարթևների դիրքերի թուլացումն էր:
2) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և ամփոփվում էր Միջնաշխարհում գտնվող ոստանում:
3) Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
4) Զաբելի և Հեթումի ամուսնությամբ վերջապես լուծվեց Կիլիկյան Հայաստանի գահակալության խնդիրը, և հիմք դրվեց Հեթումյանների արքայատոհմին:
5) Հայ–վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:
6) Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսի՝ Տիզբոն մեկնելու պատճառը Խոսրով II-ի գումարած ժողովին մասնակցելն էր:
7) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
8) IX դարի վերջին Խլաթի ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայ–բյուզանդական 893 թ. կնքված պայմանագիրն էր:
9) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառներից էին ավատատիրական մասնատվածությունը և իշխանների կենտրոնախույս ձգտումները:

62 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Բագրատունյաց Հայաստանում պետության գլուխ կանգնած էր թագավորը։
2) Բագրատունյաց բանակը կազմված էր արքունական և սակրավորների զնդերից։
3) Բագրատունյաց թագավորն ինքնակալ միապետ էր և անձամբ էր լուծում պետության գործերը։
4) Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին, հաճախ նաև եղբայրը։
5) Թագավորը կարող էր խորհրդակցել սպարապետի, կաթողիկոսի, իշխանաց իշխանի կամ այլ մեծամեծ պաշտոնյաների հետ։
6) Երկրի ներքին և արտաքին բոլոր հիմնական հարցերը վճռում էր իշխանաց իշխանը։
7) Փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով ու սովորութային իրավունքով։
8) Բագրատունյաց մշտական բանակը պատերազմի ժամանակ համալրվում էր, և թվակազմը հասնում էր մինչև 70 հազարի։

63 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) 1914 թ. ապրիլին Վեստենենկը նշանակվել է Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Տրապիզոն), իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ (նստավայրը՝ Բիթլիս)։
2) 1914 թ. աշնան վերջին ռուս-թուրքական պատերազմի ճակատային գիծը Բաթումի մոտից հասնում էր մինչև Ուրմիա լճից արևելք ընկած վայրերը՝ կազմելով 720 կմ։
3) 1915 թ. հունվարի 5–ին երիտթուրքական կառավարությունը օրենքով արգելել է կայսրության քաղաքացիների մուտքն ու ելքը տերությունից։
4) Վանի նահանգապետ Ջևդեթ փաշան 1915 թ. փետրվարին սպանել է տվել Իշխանին և Վռամյանին։
5) 1915 թ. փետրվարի 25–ի հրամանով օսմանյան բանակում ծառայող հայերին արգելվել է նշանակել հրամանատարական պաշտոններում, ծառայել ռուս–թուրքական ճակատային գծում։
6) 1916 թ. մայիսի 15–ին Դիլմանի ճակատամարտում հերոսի մահով զոհվել է 4–րդ ջոկատի հրամանատար, նշանավոր հայդուկ Քեռին։
7) Հայոց ազգային համախորհրդակցությունը գումարվել է Երևանում 1917 թ. սեպտեմբերի 29–ից մինչև հոկտեմբերի 13–ը։
8) 1918 թ. մայիսի 16–27–ը Շիրակում՝ Սոգյութլուի (Սառնաղբյուր) ճակատում, հայկական ուժերը հաղթական կռիվներ են մղել թուրքերի դեմ։

64 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Գևորգ Ե կաթողիկոսը միաբաններին ուղղված կոնդակով դատապարտել է Էջմիածինը «քանդող» խորհրդային իշխանության քաղաքականությունը:
2) Համատարած կոլեկտիվացման տարիներին գյուղ էին մեկնել բանվորական խմբեր, որոնք լուծարեցին հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունների մի մասը:
3) 1920-ական թթ. միջկուսակցական և ներկուսակցական պայքարն ավարտվել է ստալինյան ղեկավարության բացարձակ իշխանության հաստատմամբ:
4) Նէպին անցնելու առաջին միջոցառումներն իրականացվել են արդյունաբերության ոլորտում:
5) Գյուղատնտեսության կոլեկտիվացումը պլանավորված էր սկզբում ավարտել ԽՍՀՄ-ի անասնապահական շրջաններում:
6) Գյուղացիական տնտեսությունները հարկադրաբար կոլեկտիվացնելու միջոց էր նրանց նկատմամբ պետության կողմից հարկերի ավելացման քաղաքականությունը:
7) 1926 թ. Գևորգ Ե կաթողիկոսը կոնդակով դիմեց բոլոր միաբաններին՝ դատապարտելով «Քրիստոնեական եկեղեցական եղբայրության» կամ «Նորացված եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեությունը:
8) Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղար Ս. Կիրովի սպանությունը Ստալինն օգտագործեց իր նախկին զինակիցներից ազատվելու համար:

65 **Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Պապի վերադարձը Հայաստան՝ Տերենտիոսի գլխավորած զորաջոկատով
2) Մուշեղ Մամիկոնյանի դառնալը հայոց սպարապետ
3) Պապի հրամանով հայոց զորքերի հավաքվելը Ձիրավի դաշտում
4) Ձիրավի ճակատամարտի սկիզբը
5) Մուշեղ Մամիկոնյանի ամբաստանվելը Պապի առջև
6) Մերուժան Արծրունու ձերբակալությունը և մահապատիժը
7) Շապուհ II–ի զորքերի ջախջախումը Գանձակի մոտ և խաղաղության վերականգնումը Հայաստանում
8) Ատրպատականում Շապուհ II–ի գանձարանին և կանանոցին տիրանալը հայերի կողմից
9) Պապ թագավորի փախուստը ծուղակից և վերադառնալը Տարսոնից Հայաստան

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Դրոյի ջոկատի կողմից Խնուսի գրավումը
2) հայկական ջարդերի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հանդես գալը բողոքի հայտարարությամբ
3) Սարիղամիշի ճակատամարտի ավարտը՝ թուրքական բանակի ջախջախվելը
4) Արամի նշանակվելը Վանի նահանգապետ
5) Համազասպի ջոկատի կողմից Խիզանի գրավումը
6) անգլո-ֆրանսիական ռազմական ուժերի իրականացրած Դարդանելի գործողության ավարտը
7) հայկական կամավորական առաջին չորս ջոկատների ձևավորման ավարտը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Երկրորդ աշխարհամարտի ավարտը
2) Լ. Բերիայի ձերբակալումը
3) Նվեր Սաֆարյանի նշանակվելը Հայկական 89–րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար
4) խորհրդա–գերմանական չհարձակման պայմանագրի ստորագրումը
5) Սուրեն Թովմասյանի ընտրվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար
6) Մեծ տերությունների ղեկավարների Պոտսդամի կոնֆերանսը
7) Հայրենական մեծ պատերազմի ավարտը

68 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Բագրատունիների արքունիքը Կարս տեղափոխած արքան
Բ. Անիի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետը
Գ. Գառնիում փոքր զորաջոկատով Բեշիրի զորքերին պարտության մատնած իշխանը
Դ. Սասուն–Խութ գավառում VIII դ. կեսի ապստամբության ղեկավարը
Ե. Կարսի մատույցներում սելջուկների առաջնորդ Տուղրիլի մերձավորին վիրավորած հայ հերոսը
Զ. անհնազանդության պատճառով իր հողերից զրկված և «Անհողին» մականունը ստացած Տաշիր–Զորագետի արքան

1) Գևորգ
2) Գագիկ
3) Տրդատ
4) Դավիթ
5) Հովհան
6) Աբաս
7) Թաթուլ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Գործիչների անունները, ըստ նրանց պատկանելության, համապատասխանեցնել կազմակերպությունների անվանումներին.**

Ա. Կադետների կուսակցություն
Բ. «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցություն
Գ. «Պաշտպան հայրենյաց»
Դ. «Միություն ի փրկություն»
Ե. Հնչակյան կուսակցություն
Զ. Արմենական կուսակցություն
Է. «Բարենպատակ ընկերություն»

1) Խաչատուր Մալումյան
2) Պետրոս Հայկազունի
3) Մկրտիչ Ավետիսյան
4) Հակոբ Կալոյան
5) Գրիգոր Արծրունի
6) Արփիար Արփիարյան
7) Միքայել Պապաջանյան
8) Կարապետ Նշկյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) Համահայկական առաջին թագավորության հզոր և կատարյալ մշակույթն իր բազմաբնույթ ազդեցությունն է տարածել Հայաստանից դուրս՝ հասնելով Կովկաս, Իրան, Հունաստան և այլուր:
2) Մեծ Հայքի Արշակունիների թագավորության անկումը համապատասխանում է բուն հելլենիզմի ավարտի ժամանակաշրջանին:
3) Վաղ միջնադարում ծառայող ազնվականության մասնավոր տնտեսությունների ընդլայնումն ի հաշիվ գյուղական համայնքների գնալով խորանում էր՝ սկիզբ դնելով պետական հողատիրության մասնատմանը մասնավոր սեփականատիրական կալվածքների՝ ավատների:
4) Հայոց մեծ թվականի սկիզբ է համարվել 1084 թվականը:
5) Սյունի, Կաղմեա և Գուգարաց նախարարները համարվում էին բյուրավորներ:
6) Հայ առաքելական եկեղեցու առաջնորդական աթոռները, մինչև Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցու նվիրապետության հաստատումը, Արտազում, Եդեսիայում և Սյունիքում էին: